**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 21-Ն |
| Տիպ | Հրաման |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (31.12.2024-18.09.2025) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2024.12.23-2025.01.05 Պաշտոնական հրապարակման օրը 30.12.2024 |
| Ընդունող մարմին | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Ընդունման ամսաթիվ | 20.12.2024 |
| Ստորագրող մարմին | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Ստորագրման ամսաթիվ | 20.12.2024 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 31.12.2024 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«20» դեկտեմբերի 2024 թ. N 21-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԲՆՈՒՅԹԻ ԹՌԻՉՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ (THEORETICAL TRAINING AND SPECIAL FLIGHTS LIGHTS) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 56-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

***Հրամայում եմ***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման կարգը (Theoretical Training and Special Flights Lights)՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման կարգը հաստատելու մասին» N 56-Ն հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պահանջի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

| | |
|---|---|
| **Նախարար՝** | **Դ. Խուդաթյան** |
| 12/20/2024 | |

**Հավելված**
**ՀՀ տարածքային կառավարման և**
**ենթակառուցվածքների նախարարի**
**2024 թվականի դեկտեմբերի 20-ի**
**N 21-Ն հրամանի**

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 30 դեկտեմբերի 2024 թվական:**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|
| 15.09.2025, N 22-Ն | 20.12.2024, N 21-Ն |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|